Հետազոտականաշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպությանտվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցայինդպրոց» կրթականհիմնադրամ ՎահրամՍողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտությանթեմա/վերնագիր • Հետազոտությանթեմա	**«ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ»**
Ուսուցչիտվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ.հասցե • Դասավանդվողառարկաներ • Դասարաններ	Ամիրջանյան Միհրդատ Մելսակի Պատմության ուսուցիչ 6-12-րդ դասարաններ
Ուսումնականհաստատությանտվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Web կայքիհասցե	«Հատիսի Վ. Վարդանյանի անվ. միջ. Դպրոց» ՊՈԱԿ hatis@rambler.ru 094117140

Բովանդակություն

Բովանդակություն.....2

Ներածություն..... 3

Գլուխ.1 «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ»

1.1 Նախագծային ուսուցման դերը սովորողների կարողունակությունների զարգացման վրա «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանման ընթացքում.....7

1.2Նախագծային աշխատանքի օրինակ «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման շրջանակներում.....14

Եզրակացություններ.....24

Օգտագործված գրականության ցանկ.....27

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Նպատակ-** Ուսումնասիրել նախագծային մեթոդի դերը արդի կրթական համակարգում՝ որպես սովորողներին դեպի ուսումնական գործընթաց ուղղորդելու արդյունավետ միջոց: **Հարց-** Ինչպիսի՞ ազդեցություն ունի ուսուցման նախագծային մեթոդը սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացման, ինչպես նաև սովորել սովորելու, ժողովրդավարական, քաղաքացիական կոմպետենցիաների ձևավորման վրա «հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում: «Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան» Ռաֆֆի Թերևս ճշմարիտ էր մեծն վիպասանը, որ հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից: Այսօր՝առավել քան երբևէ, մատաղ սերունդը պետք է

	խորքային գիտելիքներ ունենա իր պատմության, անցյալի հաղթանակների ու պարտությունների մասին: Սա օախնդիր է՝ հաշվի առնելով մեր երկրի առջև ծառացած մարտահրավերները: Այնուամենայնիվ, գիտելիքաստեղծ գործունեությունը դպրոցում հենվում է ուսուցչի մասնագիտական որակների, նրա կոմպետենտության, կրթական համակարգի բարեփոխումների վրա: Այսօր մեր երկրում ևս մեծ թափով արդիականացվում է կրթության ոլորտը: Որպես նորարարություն՝ դիտարկվում է նաև ուսուցման նախագծային մեթոդը:Նախագծային մեթոդը կրթական մեթոդների ամբողջություն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Արդյունքը՝ տեսանելի, ներկայանալի, հրապարակված աշխատանքն է, որն ամբողջապես սովորողի ինքնուրույն աշխատանքի արգասիքն է: ՀՀ կրթական համակարգում այս մեթոդը նորություն է, մինչդեռ նման ուսուցման տեսակն ունի բավականին կենսափորձ ու կիրառելիություն մի շարք երկրներում: Քանի որ նախագծային աշխատանքը սովորողին տալիս է համալիր գիտելիք, նոր կարողունակություններ, գործնական հմտություններ, կարծում ենք՝ ճիշտ որոշում է

	նման ուսուցման համատարած ներդրումը ՀՀ կրթական համակարգում: Նախագծային ուսուցումը սովորողի համար այնքանով է հետաքրքիր, որ աշխատանքների իրականացնողը, նախագծողը, տեղեկատվության համակարգողը, վերլուծողը հենց ինքն է՝ սովորողը: Իսկ այսօրվա սովորողը, ով ունի այլ մտածողություն ու ժամանակի զարգացումներով պայմանավորված կրթական պահանջմունքներ, ինչպես գիտենք, շատ հաճախ է ուսուցչից պահանջում հենց նմանօրինակ դասեր անցկացնել, որտեղ ինքը կարող է գործնականում կիրառել տեսական գիտելիքների իր պաշարը և գործել ինքնուրույն: Նախագծային ուսուցումը սովորողին մղում է մտածելու, ստեղծելու, համեմատելու, զուգահեռներ անցկացնելու: Սովորողը աշխատանքի ընթացքում դառնում է հետազոտող, բացահայտող, նորարար, ուստի այս աշխատանքները գրավիչ ու հետաքրքիր կարող են լինեն սովորողի համար: Նախագծային գործունեությունը կազմակերպելիս հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները , պատրաստվածությունը, ՏՀՏ-ի կիրառման

	հմտությունները, օտար լեզուների իմացության աստիճանը: Աշխատանքը թույլ է տալիս ակտիվացնել բոլորին, ներգրավել նույն նպատակի իրականացման մեջ: Կարծում ենք՝ այս մեթոդն իր դրական ազդեցությունը կունենա ՀՀ-ու կրթության որակի բարձրացման ու սովորողների ինքնուրույնության բարձրացման վրա:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Թեմայի կարևորությունը պայմանավորված է «հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում կրթական առաջարկի ու պահանջարկի համընկմամբ՝ ի դեմս նախագծային մեթոդի գործադրման:
Ո՞ր առանցքային նկոմպետենցիային/ կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• Սովորել սովորելու կոմպետենցիա • Ժողովրդավարական, • քաղաքացիական կոմպետենցիա • Ինքնաճանաչողական և սոցիալական կոմպետենցիա
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	«Մանկավարժություն և մեթոդիկա»

Գլուխ.1 «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ»

1.1 Նախագծային ուսուցման դերը սովորողների կարողունակությունների զարգացման վրա «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանման ընթացքում

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,	Նախագծային ուսուցումը կարելի է դիտարկել որպես դիդակտիկ համակարգ, իսկ նախագծային մեթոդը՝ որպես այդ համակարգի բաղադրիչ, որպես մանկավարժական

• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	տեխնոլոգիա, որը ներառում է ոչ միայն գիտելիքների ինտեգրումը, այլև գիտելիքների կիրառումը, նորերի ձեռքբերումը: Նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Նախագծային մեթոդի խնդիրներից է սովորողի սովորել սովորեու կարողունակության ձևավորումը՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու հմտությունները: Որպես Նախագծային մեթոդի վերջնարդյունք՝ կարելի է համարել սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, ՏՀՏ-ում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագոր ծական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Նախագծային մեթոդի հիմքում ընկած են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուիի կողմից առաջ քաշած մանկավարժական հասկացությունները, ով դրանք գործնականում կիրառել է Չիկագոյի փորձարարական լաբորատոր դպրոցում 1896 – 1904 թվականներին: Ջ. Դյուին կարծում էր, որ դպրոցի բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն սովորողի մտածողության

	ձևավորմանը, որը հիմնված է անձնական փորձառության վրա: Ըստ Դյուիի՝ մեթոդը տալիս էր այնպիսի պայմաններ, որոնք հարմարեցված էին անհատական կարիքներին և կարողություններին, ինչպես նաև կարող էր ապահովել դիտարկման, ներկայացման, հետազոտության, գաղափարների մշտական զարգացման համար համապատասխան պայմաններ[1]: Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մեթոդներից այն է, որ հնարավորությունե տալիս սովորողների մոտ մեկ աշխատանքային գործունեության ընթացքում միանգամից զարգացնել համալիր կարողունակություններ: Այս աշխատանքը սովորողին տալիս է մի շարք առավոլություններ, դրանք են՝ ▪ սովորողի հետաքրքրությունների շրջանակի բացահայտում, ▪ սովորողի գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառություն, ▪ ինքնուրույնություն, ▪ ստեղծարար մտածելու և գործելու կարողություն ▪ արդյունքի ներկայացում, ▪ նախագծելու, համակարգելու կարողություն, ▪ ՏՀՏ կիրառելու կարողություն,

[1] Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013, стр.8

	▪ Կոլեկտիվ աշխատելու ունակություն: Նախագծային ուսուցումը ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները: Այն կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք[2]: Ուսուցման այս մեթոդի շրջանակներում նախագծային աշխատանքի նախագծումը բավականին աշխատատար ընթացք է, ունի հստակ փուլեր, դրանք են՝ ▪ Թեմայի կամ գործունեության ընտրություն ▪ Աշխատանքի պլանավորում ▪ Տեղեկատվական հոսքերի կառավարում ▪ Գործընթացի կազմակերպում ▪ Գործընթացի իրականացում ▪ Արդյունքների ցուցադրություն Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է. սովորողներն իրենց ուսուցչին դերային մոդել են համարում: Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի

[2] http://boon.am/learning/ Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին)

	կարևորության գիտակցություն է պահաջվում: Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար[3]: Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ թիմային աշխատանքի ժամանակ սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց, սովորում ու սովորեցնում են իրար: Հայոց պատմության դասավանդման ժամանակ նույնպես կարելի է իրականացնել հետաքրքիր նախագծային աշխատանքներ: Այս համատեքստում նշենք, որ գրքային ծավալուն տեքստ, որպես կանոն, սովորողի համար կարող է ձանձրալի ու անհետաքրքիր թվալ, վերջինս առարկայականություն է ուզում՝ տեսնել, շոշափել, զգալ պատմական երևույթները, ուսումնասիրել հնավայրերը, ծանոթանալ գտածոների, համեմատել դրանք, եզրահանգումներ ու դատեղություններ կատարել: Նախագծային ուսուցումը կարող է նպաստել սովորողների պատմական մտածողության արդյունավետ ու համակողմանի ձևավորմանը: Աշխատանքի իրականացման ընթացքում հաշվի են առնվում

[3] http://boon.am/learning/ Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին)

	սովորողների տարիքային առանձնահատկությունները, կարողությունների, հմտությունների առարկայի իմացության մակարդակը, նախասիրությունները: «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում իրականացվող նախագծային աշխատանքը սովորողների մոտ ձևավորում է ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, որի շրջանակներում սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտելու ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների

	խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչելու դրանց տարբերությունները[4]: Այսպիսով, սովորողները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, այցելում են թանգարաններ, հնավայրեր, դառնում են հետազոտողներ, պատմաբաններ, հնէաբաններ՝ կախված ուսումնասիրության թեմայից, ապա նոր միայն պատրաստվում նախագծի պաշտպանությանը: Պաշտպանությունը աշխատանքի վերջնական արդյունքն է, որը կարող է լինել ցանկացած բնույթի՝ կախված սովորողի ստեղծագործ մոտեցումից: Ուսուցիչը լսում է, սովորողներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը: Նախագծային մեթոդն առաջարկում է ավելին, քան ավանդական կրթության և դպրոցի շրջանակը: Այն կենտրոնանում է առօրյա

[4] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր ոշում«Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

	կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների փորձառությունը: Ինչպես արդեն նշել էինք, այստեղ առանցքային դերակատարում ունի նաև ուսուցիչը, ով ապահովում է մասնագիտական խորհրդատավություն սովորողին, օգնում է որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնում է կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, ինչպես նաև փոխանցում է համապատասխան հմտություններ: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ»[5]: Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ թիմային աշխատանքի ժամանակ սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց, սովորում ու սովորեցնում են իրար: Վերջիններիս մոտ ամրակայվում է կոլեկտիվ աշխատանքի գաղափարը, մեկտեղ աշխատելու, սովորելու, ուսումնասիրելու ու հետազոտելու ընթացքում սովորողների մոտ բարձրանում է պատասխանատվության զգացումը, սեփական ներդրումն ունենալու ձգտումը: Նրանք

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված27,կետ 4:

	կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը: **1.2 Նախագծային աշխատանքի օրինակ «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման շրջանակներում** Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն, ներառյալ նրանք, որոնք գերազանցում են նախկինում հաղթահարածը, մարդ կարող է կառավարել, հենվել իր իմացական ու գործառական, ուստի և կրթության արդիականացման հիմքը հենց ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող ունենալու վերջնարդյունքն է: Այս բոլոր գործընթացներում իր դերն ունի հարակրթական ուսումնական հաստատությունը, ուսուցիչը, ճիշտ պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Ինչպես նշեցինք, «Հայոց պատմություն» առարկան իր կարևոր ազդեցությունն ու նշանակությունն ունի մատաղ սերդի հայեցի կրթության ու դաստիարակության գործընթացում: «Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է

	պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն ունի իր յուրահատուկ դերակատարումը համաշխարհային քաղաքակրթության պատմության հոլովույթում: Սրանով է կանխորոշվում այդ անձի, քաղաքացու և պետության դերակատարումը համաշխարհային գործընթացներում: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողություն, պատասախանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի[6]: Առարկայի դասավանդումը ավանդական եղանակով շեշտադրում է ուսումնական նյութի

[6] https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ (նախագիծ):

	մեխանիկական վերարտադրում: Սովորողները հազվադեպ են հնարավորություն ունենում կարծիք, դիրքորոշում հայտնելու, պատմական այս կամ այն իրողությունը մեկնաբանելու և համեմատության մեջ դնելու առումով: Ուստի հենց այս առարկայի դասավանմդման շրջանակներում նպատակահարմար է իրականացնել նախագծային աշխատանքներ: Հայոց պատմություն առարկայի ուսումնառության հիմքում դրված են հետևյալ գաղափարները **1.** Հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացությունը առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներն են, որոնք ժամանակ, տարածություն և մշակության սահմանափակումներ չունեն): **2.** Հմտություններ. ✔Սովորողի մոտ ուսումնական հմտությունների զարգացում. քննադատական վերլուծական, հետազոտական, ստեղծագործական մտածողություն ✔Հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում. ✔Ինքնակազմակերպման հմտություն: **3.** Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն: 4. Տարբերակված ուսումնառություն: **5.** Իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն[7]:

[7] Նույն տեղում:

Դիտարկենք նախագծային մեթոդի կիրառությամբ աշխատանքի օրինակ

Նախագծային աշխատանք

Դասարան՝ 8-րդ

Թեմա՝ «Հայոց ցեղասպանությունը»

Աշխատանքի տևողությունը՝ 2 ամիս

Աշխատանքի նպատակը՝

- Ձեռք բերել գիտելիքներ Հայոց ցեղասպանության (շարժառիթներ, պատճառներ, ծրագրեր փուլեր, հետևանքներ, պատմական դասեր, ճանաչման գործընթաց, ինքնապաշտպանական մարտեր) վերաբերյալ, ըմբռնել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է:
- Հաղթահարել զոհ լինելու բարդույթները, ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն, ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ

	կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները: ● Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի յուրացման, կորուստներից դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: ● Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ: **Աշխատանքի վերջնարդյունքը՝** ● Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի իրավիճակը XIX դարի վերջին XX դարի սկզբին: ● Ներկայացնի 1915-1916 թթ ինքնապաշտպանական մարտերը, համեմատի և վերլուծի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, արդյունքներն ու հետևանքները, արժևորի միասնական և փոխհամաձայնեցված

	գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական, հոգևոր և անձնական շահերի միասնականության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում ● Արտահայտի սեփական տեսակետներ և դիրքորոշումներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, պահանջատիրության, ցեղասպանության հետևանքների հաղթահար-ման ուղիների, և հիմնախնդրի զարգացման հեռանկարների և արդյունքների վերաբերյալ, փորձի առաջարկել հիմնախնդրի լուծման տարբերակներ: ● Գնահատի Հայոց եղեռնի վերաբերյալ մեծ տերությունների, առաջադեմ գործիչների և կազմակերպությունների արձագանքները, հայերին փրկելու անհատ միսիոներների և Հայոց եկեղեցու գործողությունները, կարծիք հայտնի Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարության, Նեմեսիս գործողության, Հայկական հարցի «լուծման» ռուսական ուղիների վերաբերյալ: ● Ցույց տա Հայոց ցեղասպանության անպատժելիության և XX դարի ցեղասպանությունների կապը, դատապարտի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն

	հանցագոր-ծություն. արժևորի և հիմնավորի պատմական փորձի յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: ● Կապեր գտնի պատմական և արդի գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: ● Որպես ուսումնաօժանդակ նյութ՝ պատկերացում ունենա 20-րդ դարի այլ ցեղասպանությունների մասին/Հոլոքոստ, Ռուանդայի ցեղասպանություն, Կամբոջայի ցեղասպանություն: ● Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ Այսպիսով, նախագծային աշխատանքի իրականացմանն ընդառաջ սովորողներ կայցելեն Հայոց ցեղասպանության

	հուշահամալիր՝ «Ծիծեռնակաբերդ», կծանոթանան թանգարանին ցուցանմուշներին: Այս այցելությունը անչափ կարևոր ու առարկայական մեկնարկ կդառնա նախագծային աշխատանքն իրականացնելու համար: Հաջորդիվ տեղեկատվություն կքաղեն թանգարանի պաշտոնական կայքից՝/http://www.genocide-museum.am/arm/ : Այտեղ նրանք կծանոթանան մի շարք պատմական փաստաթղթերի, վերապրողների ու ականատեսների հուշերին, միսիոներների ավանդին՝ հայ որբերի փրկության գործում: Այս ուսումնասիրություններ ավելի պատկերավոր ու խորքային գիտելիքներ ու պատկերացումներ կտան սովորողներին: Նախագծային աշխատանքի նպատակն է դուրս գալ դասագրքային նյութից, հավաքել տեղեկություններ հայոց ցեղասպանության դրա նախադրյալների, պատճառների ու հետևանքներիմասին: Աշխատանքի հաջորդ փուլում սովորողները կուսումնասիրեն մեդիա դաշտը՝ ծանոթանալու համար միջազգային կազմակերպությունների ու առանձին երկրների դիրքորոշումը «Հայ դատի» և հայոց ցեղասպանության ճանաչման առումով: Համացանցից տեղեկություններ կփնտրեն «Նեմեսիս» ծրագրի մասին՝ ուսումնասիրելով Սողոմոն Թեհրելյանի, Ավ. Իսահակյանի, Շահան Նաթալու գործունեությունը: Կանդրադառնան նաև «Կարմիր կիրակի» չարաբաստիկ օրվա իրադարձություններին: Կուսումնասիրեն հայ

	մտավորականների տեղահանությունը ապրիլի 24-ին, որի ընթացքում Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ համայնքի առաջնորդները, իսկ հետագայում նաև կայսրության այլ համայնքների հայտնի ներկայացուցիչները ձերբակալվեցին ու սպանվեցին: Այստեղ միջառարկայական կապը «Հայ գրականություն» առարկայի հետ ակնհայտ է, քանի որ 1915 թվականի ապրիլի 24-ին ձերբակալված հայ մտավորականներից էին նաև բազմաթիվ գրողներ ու բանաստեղծներ՝ Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Ռուբեն Զարդարյան, Արտաշես Հարությունյան, Սիամանթո: Աշխատանքն իրականացնելիս հարկ է անպայման հաշվի առարկայական ինտեգրման հնարավորությունները, որը թույլ կտա համակողմանի ուսումնասիրել նյութը: Սովորողներին մեծապես կօգնեն նաև «Ինֆորմատիկա» առարկայից ստածաց գիտելիքները: Այս գիտելիքներն անկյունաքարային նշանակություն ունեն նախագծային աշխատանքի իրականացման համար, քանի որ տեղեկատվական հոսքերի հիմնական աղբյուրը սովորողների համար հենց համացանցային հարթակներն են: Սովորողներն ուսումնասիրության ժամանակ հնարավորություն կունենան առնչվել նաև աշխարհագրությանն ու օտար լեզուներին: Ի սկզբանե ուսուցիչը դասարանը կբաժանենք

	խմբերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է կատարի կոնկրետ հանձնարարություն: Այս կերպ խրախուսվում է սովորողների թիմային աշխատանքը, վերջիններս հասկանում են, որ իրենցից յուրաքանչյուրը պարտավոր է ամեն կերպ ունենալ մասնակցություն մեկ ընդհանուր նպատակի հասնելու համար: Որպես աշխատանքի վերջնական ներկայացման տարբերակ՝ կարելի է ընտրել տեսահոլովակի, ցուցապաստառի և տեսասահիկի, զեկույցի պատրաստումը: Այս աշխատանքը բավականաչափ կարող է նպաստել սովորողների ինքնուրույնությանը, առանց ուսուցչի օգնության տեղեկատվության մշակմանն ու համակարգմանը: Աշխատանքի իրականացմանը զուգընթաց՝ սովորողներն անկաշկանդ կարող են դրսևորել իրենց ստեղծագործականությունը, հանդես գան նոր գաղափարներով, լինեն նախաձեռնողի դերում՝ ամբարելով գիտելիքների ու կարողունակությունների համակողմանի պաշար: Այսպիսով, կարող ենք ասել, որ նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը: Արդյունքում՝ սովորողը գործնականում կհասկանա, թե որքան կարևոր է սովորել, ինքնազարգանալ ու հավաքել անսահմանափակ գիտելիքներ,

	հմտություններ ու կարողություններ:Վստահաբար կարող ենք ասել, որ ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը ոչ միշտ է հանգեցնում այն վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով: Կարևոր ենք համարում նախագծային ուսուցման հնարավորությունները, որի շրջանակներում սովորողն իրեն ապահով ու հանգիստ ՝ զգում, կարողանում է մոբիլիզացնել իր ողջ մտավոր ու ստեղծագործական ներուժը, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ: Ինչու չէ կարևոր է նաև բարոյահոգեբանական միջավայրը. յուրաքանչյուր սովորող պետք է աշխատանքի ընթացքում իրեն կարևոր զգա, հնարավորություն ունենա ինքնադրսևորվելու: Անշուշտ, մեր թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է կազմակերպի աշխատանքի ընթացքը, հաշվի առնի սովորողների անհատական պահանջմունքները: Վերահաստատենք մեր այն պնդումը, որ նախագծային աշխատանքը սովորողին մղում է մտածելու, ստեղծելու, համեմատելու, զուգահեռներ անցկացնելու: Սովորողը աշխատանքի ընթացքում դառնում է հետազոտող, բացահայտող, նորարար, ուստի

	այս աշխատանքները գրավիչ ու հետաքրքիր կարող են լինեն հենց սովորողների համար: Լիահույս ենք, որ սույն հետազոտությունը խթան կհանդիսանա մեզ՝ ուսուցիչներիս համար մոտիվացվել դեպի նորը և մոտիվացնել սովորողին:
Օգտագործված մեթոդները, գործիքները	
Իրականացման ժամանակահատվածը	1 ամիս
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	8-րդ դասարանի սովորողներ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Սույն հետազոտության թեմայի ուսումնասիրության ընթացքում կատարեցինք մի շարք դիտարկումներ, որոնց մասին կխոսենք ստորև: Կարծում ենք, որ նախագծային

ուսուցումը էականորեն կարող է բարձրացնել սովորողի մոտիվացիան, հետաքրքրությունը սովորելու նկատմամբ, իսկ դա կրթական համակարգի շարժիչ ուժն է: Սովորողի ինքնուրույնության, նախաձեռնողականության բարձրացումը ենթադրում է վերջինիս աշխատունակության բարձրացում:

Նախագծային ուսուցումը, նախագծային մեթոդի համընդհանուր կիառությունը թույլ կտա բարձրացնել սովորողի աշխատունակությունը, կօգնի սովորողներին տեսական ու գործնական բաղադրիչները արդյունավետ համակարգել, խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է տիրապետում համալիր գիտելիքների: Նախագծային մեթոդի ներդրումը կօգնի սովորողի համար կանխատեսելի դարձնել առաջարկվող խնդրի լուծումը նախագծային գործունեությամբ: Այս համատեքստում կարևոր ենք համարում նաև ուսուցչի կարողունակությունների զարգացումը,ծանոթացումը մեթոդի առանձնահատկություններին ու կառուցվածքին: Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների և ուսուցիչների համար հասանելի դարձնել զանազան տեղեկատվական աղբյուրներից օգտվելու գործընթացները:

Այսպիսով, կարող ենք ասել, որ նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը: Արդյունքում՝ սովորողը գործնականում կհասկանա, թե որքան կարևոր է սովորել, ինքնազարգանալ ու հավաքել

	անսահմանափակ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ (նախագիծ):
3. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր ոշում«Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման

կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

4. http://boon.am/learning/ Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին):
5. Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ	`/http://www.genocide-museum.am/arm/ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պաշտոնական կանյք

(հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	